

Արդ՝ ըստ սր. Գրքի աւանդութեան, լաւանի է, որ Արարատը հչ թէ մարդկութեան առաջին, ալ և ը կ ը ո ր դ օրբանն եղաւ, աշխարհակործան ջրհեղեղից կտոր, Առաջին անդամն է լսում, որ դրախտը Մասիսի վրայ է եղել:

«Դ է պ ի վ ե ր ը» գրուած է անդամութեան տաս, վանկեան չափով. լեզուն պարզ և հալերէն է. պատահում են նաև մի քանի նորակազմ անտաշ բառեր. ինչպէս օրինակ աւ ը ձ ա գ ա ն ք ե ց ի ն»— արձագանք տուին— «Թ ը լ ս պ ե ր՝ լսուլ որոտումներով», կան թէև սակաւ, անճիշտ ոճեր. օրինակ,

«Ան մաքուր ձիւնը ջըրի տեղ կ ը տար» (կրոնի). Հալերէն հարցական և զարմացական նշանների հետ գործ են ածուած և կրօպականները, որ բոլորովին աւելորդ են. տպագրական սխալների թիւը քիչ չէ.

Ընդհանուր տպաւորութիւնը լաւ է. լանձնարարում ենք իրրն ընթերցանութեան գրքով:

VILLAM WATSON. ԺԻՌԱՆԻ ԱՐԵՒԵԼՔԸ Թարգ. անգլ. Խոսրով. 1903 Բաղիզ:

Վերջին հակական սարսափելի կոտորածների ժամանակ անդլիական մամուլը և առ հասարակ ժողովուրդը մեծ հտմակրանքով էին վերաբերում հալերին. թէ քաղաքական թերթերում ու թէ գիտական պարբերական հրատարակութիւնների մէջ շարունակ գրում էին հալերի մասին. նորն իսկ եղան բանաստեղծներ, որ երգեցին հալի ցաւերն ու վշտերը. դրանց մէկն է Ուիլլի ը մ Ուո թ ս ը ն ը, որի հալերի վերաբերմամբ դրած թախծալի բանաստեղծութիւնները մի զըրքովի մէջ ամփոփուած լուս տեսան և ցալժմ երեք հրատարակութիւն ունեցան:

«Ծ ի ը ա ն ի ա ր ե լ ք ն» ալդ բանաստեղծութիւնների թարգմանութիւնն է. դրանք թուով տասնեօթն են և 30 փոքրադիր էջ են լցնում: Թարգմանութիւնը կատարուած է տաճկահաւ բարբառով, սակալն շատ խրթին լեզուով. զրաբար և շատ անհասկանալի բառերով լի են ալդ բանաստեղծութիւնները. վերնագիրները միայն զրափէ են. «Թուքքը Հայաստանի մէջ», «Վատասիրտ Անգլիա», «Անգլիա առ Ամերիկա»,

«Ո՞նվրդով արդարութիւնը», «Անզգալութեան ժանտախտը», «Ասպետականութեան մահաղանդակը» և այլն:

Որպէս զի մեր խօսքը չերկարի և ընթերցողն աւելի պարզ գաղափար կազմի թարգմանութեան անճռութեան մասին, առաջ ենք բերում հէնց առաջին տեղը դրուած բանաստեղծութիւնը.

ԹՌՈՒՐԾՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵջ

«Ի՞նչ օգուտ, ով Անդլիա, ժողովքի մէջ աիրելէդ, Մարտավալիրի և նոյնպէս շահաստանի, Ցրուելէդ Ովկիանոսի, վրայ նաև եր, և նորոգել տուրքերով — Հստացուած ոսկերեր իւրաքանչիւր երթուեկէդ — Դանձարանները, թէ ւել կարող չես լացկոծ Նահատակուած կինորու՝ խոռածանէն ճերմակ· վաթթոց, Ամենամեծ դութն որուն սուրն էր որով մորթեց ան Եւ ձեռքդ չես վերցներ շարժել մաքրիչ զաւաղան. — Անկէց պաշտօն ունէիր կը կարծէինք հնուց վեր, Որ սերորօք շուրջ պատեալ դիտեց ու կը դիտէ դեռ — Հարուածելու չարգործն քեզ վիճակուած մականով. Իր նըշանին կը սպասես, անլսելի սրտխորով Բաւ լաց կուս հոգիներու՝ վրէժի համար, և վերն ալ՝ Բաւ պըսատում բարդիբարդ մե լոնքերուն Բարձըրեալ. Ներողութիւն, ընթերցնդ, ալս «բարդիքարդ պըսաւում - ի համար»:

Վ. ՓԱՓԱՋԵԱՆ. ԼՄՄԱ, վէպ ժամանակակից բարքերից. 1901 Խոհջլիս.

Մեր երիտասարդ վիպագիրների, կամ աւելի ճիշտ վիպական պատերներ գրողների մէջ որոշ տեղ է բռնում Վ. Փառ փաղեանը, որի զրուածքները տասնեակ տարի է արդէն լուս են տեսնում մեր պարբերական թերթերում, ժողովածուների մէջ և առանձին գրքուկներով. Այդ գրուածքներից մի քանիսը թէն գեղարուեստի կողմից թողլ են, սական իրական կեանքի ճշգրիտ պատկերն են՝ ներկալացնում. ալդ տեսակիցն է և հեղինակի նորագոյն աշխատութիւնը, իմման, որի 1 մասում պ. Փափաղեանը լուսանկարչական ճշտութեամբ նկարագրում է Զուիցերական հալ ուսանողական կեանքն ու բարքերը. Այս գրուածքի մէջ բուն վիպական մասն իսկապէս շատ թուլ է ընթերցողին անքան էլ չէ հետաքրքրում, թէն արծար-